

Համբան է լոկ մըտերիմ խոր միտքերու .
Ինչպէս մատեան, հին օրերու մէջ գրքուած .
Ու կը կարդան, կը մըտածեն, անբախանց
Տիեզերքներ, հորիզոններ անհնալու :

Իրենց տենչն է արեգակներ ըստեղծել,
Հոն ուր խաւարն՝ երկինք եղաւ դարերուն .
Եւ գրքուրեամբ մերձենալով հայ մարդուն,
Յիսուսաբար արցունքով սիրտը բուծել :

Կը շրջին լուռ, անհունին հետ միասին,
Տեսիլքի գէտ, որ երկինքէն լոկ կ'իջնէ .
Ամէն մէկն իր հոգիին մէջ կը տեսնէ
Արշալոյսներ, որոնց համբան բըռնեցին :

Ձատուած յաւիտ աղմուկներէն աշխարհի,
Նոնիներու ըստուերին տակ կը փայտն .
Կայծեր կ'իյնան հին մատեանի մ'էջերէն,
Ուր կը կարդան քաֆուն օրերն անցեալի :

Եւ համբան այդ յաւիտեանէ յաւիտեան
Միշտ կ'երկարի եւ չի հասնիր սահմանի .
Նարեկացին հոն պիտի գար խոկումի,
Դարերն երէ ընկրկէին մէկ վայրկեան :

Քանի՜ մըմունջ եւ ֆանի՜ սէր յանձնեցին
Նոնիներուն եւ կապոյտին անապակ .
Քանի՜ արցունք ծաղիկ տըւին լոյսին տակ,
Եւ գիշերներն ալ փոխուեցան ծիր կաթին :

Նոնիներուն համբան հանդարտ կը փայտ
Կարապի պէս մաքուր լինի երեսին .
Միտքեր կու գան, սրտեր կու գան ու կ'անցնին,
Եւ սուրբ Ղազար ջահ մ'ամէն օր կը վառէ :

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԾԱՆՈԹ. — Հեղինակին ներշնչումի աղբիւրն է «Նոնիներու համբան», որ կ'երկարի
Ս. Ղազար կղզեակի Երիստակոյմը, լեակի եզերքին. հոն է որ միաբանները յանալս կու գան
շրջագայիլ ու խոկալ :

Ի Տ Ա Ն Ա Ն Յ Ն Կ Ս Ր Ի Չ Լ Ե Ի Ո Ն Մ Ի Ն Ա Ս Ե Ա Ն



Իր հօր երեւակայութեան, ինքնատիպ
եւ անկրկնելի ոճին ու նուրբ ճաշակին
չնորհիւ, Լեւոն Մինասեան՝ Խալիլ Եր-
զի լաւագոյն նկարիչներէն մէկը կը հան-
դիսանայ :

Ներկայ դարու նկարչութեան Բարե-
լոնին մէջ, քառասուն տարուան ընթաց-
քին, արուեստագէտի վաւերական խառ-
նուածքով եւ անվիանդ աշխատանքով,
Լեւոն Մինասեան կրցած է բարձրացնել
համբաւի ամուր աշտարակ մը, որ սահ-
մանուած է կանգուն մնալու երկար ժա-
մանակ :

Հայ արուեստագէտը ծնած է Պոլսի՝
1905ին : Մանուկ հասակին, այրբենդիմ
սորվելէ առաջ, սկսած է դժեւ, իրեն ու-
սուցիչ ունենալով, խալիլի նկարիչ՝
Leonardo de Manzoն :

1920-21ին՝ զինքը կը գտնենք Խալիլի
Նափոյի քաղաքը, ուր դանիացի Axel
Jarl նկարիչին ցուցմունքներով, հսկա-
յաքայլ կը յառաջդրմէ նկարչութեան
մէջ : Լ. Մինասեան՝ 16 տարեկանին, ի-
րապարեմ է իր առաջին զեւեցիկ իւզա-
նկարը :

Անիկա, 1921ին՝ կ'անցնի Վենետիկ,
ուր մինչեւ 1923 կը հետեւի Contardo եւ
Rinaldo արուեստագէտներու դասըն-
թացքներուն, միեւնոյն ժամանակ նկար-
չութեան մասնաւոր դասեր կ'առնէ Ame-
deo Bianchiէն :

1924-1927 տարեշրջաններուն, կանոնա-
ւոր կերպով, կը յաճախէ Վենետիկի Գեղ-
արուեստի Կաճառին կից գեղուող, Scuola
Libera del Nudo նկարչութեան վար-
ժարանը : Անիկա կը հետեւի նաեւ Ales-
sandro Milesi համբաւուոր նկարիչի դա-
սերուն :


Լեւոն Մինասեանի արուեստին վրայ,
սակայն, մեծադոյն ազդեցութիւն ընողը
կ'ըլլայ իտալացի նշանաւոր նկարիչ Pio
Semeghini, որուն մէկ բնանկարը հայ
արուեստագէտի առջեւ կը բանայ արդի
նկարչութեան ուղին :

Semeghini նկարիչին հանդիպումէն
ետք, Լ. Մինասեան կը լծուի լուրջ եւ
ունխոնջ աշխատանքի : Անիկա, անհուն
ծարաւով, կ'ուսումնասիրէ արուեստի
հին եւ նոր վարպետներու գործերը, կ'այ-
ցելէ թանգարաններ, դուրս-գործոցներով
զարդարուած եկեղեցիներ, գրադարան-
ներ, ցուցահանդէսներ, մասնաւորապէս
Վենետիկի նկարչութեան Երկամեայ
(Biennale) անուանի ցուցահանդէսները :

Ամբողջացնելու համար հայ նկարիչին
ուսուցիչներու ցանկը, պէտք է նշել նա-
եւ, որ 1925ին, Լեւոն Մինասեանի նկար-
չական ոճին վրայ, կարեւոր ազդեցու-
թիւն ըրած են նաեւ նկարիչ Quistellóի
գործերը, եւ այդ ոճին հաւատարիմ մնա-
ցած է մինչեւ 1944 :

Լեւոն Մինասեան՝ իր անթիւ գրու-
թիւններէն մէկուն մէջ ըսած է. «Ար-
ուեստի մէջ, գոյութիւն ունի անողորմելի
օրէնք մը, որ կ'արգիլէ արուեստագէտին
միեւնոյն մակարդակի վրայ կարենալ մը-
նալը : Մարդ կը բարձրանայ կամ կ'իջնէ :
Բայց, մինչ վերելքը դանդաղ եւ յոգնե-
ցուցիչ է, էջքը՝ դահաւիթով» :

Մեր արուեստագէտին կեանքն ալ յա-
րատեւ վերելք մը եղած է, իրր արդիւնք



Լ. Մ. - «Ձարգացող ձեւեր», իւղաներկ (70x80 կրկմ.), 1964:

աքնաջան աշխատանքներու: Անիկա՝ եւրիտասարդութեան շրջանին, իր իսկ խոստովանութեամբ, օրական երբեմն 16 ժամ անդուլ աշխատանքով, ջանացած է կատարել նորանոր նուաճումներ, ուղած է թափանցել գեղարուեստի բոլոր գաղափարներուն մէջ:

1948ին, Լ. Մինասեան կ'ունենայ իր կեանքի երկրորդ անկիւնադարձը: Ներքին պայքարներէ եւ ամուլ գաղարէ մը ետք, անիկա, որ քսան տարի նկարած էր հաւատարմօրէն բնութիւնը օրինակելով, յանկարծ՝ բնութեան հետ ամէն կապ կը խզէ եւ կը դիմէ երեւակայութեան ստեղծագործ գործութեան, տալով իր գործերուն գերերապաշտ գաղափարին հեքիաթային քնարականութիւնը:

Արդէն, տարի մը առաջ, 1947ին՝ անիկա սկսած էր վերացական-գերերապաշտ նկարագիր ունեցող շարք մը գծադրութիւններ արտադրել: 1948էն ի վեր, Լ.

Մինասեան կը շարունակէ ստեղծել գրեթէ միշտ նոյն խորքով, նոյն սոսի, նոյն գոյներով նկարներ:

Գիտակից իր բռնած նոր ուղիին, անիկա յատկօրէն կ'արտայայտուի իր գործերու մասին՝ գրելով սա տողերը.

«Իրերուն ոչ միայն երեւոյթը այլ նաեւ անոնց ներքին իմաստը տալու ճիւղով... աւելի քան քսան տարի բնութիւնը զննելէ ետք, ինքզինքս գտայ գերերապաշտ սեմէն անդին: Երկար տարիներ նկարեցի բնութեան հետեւողութեամբ. այժմ կը նկարեմ յիշողութեամբ»:

Լ. Մինասեանի գանդալ յեղաշրջումը իր գաղաթնակէտին հասու 1950ին՝ նկարելով «Փոթորիկի սպասում» պատուար, որ նոյն տարուան Վենետիկի Երկամեայ (Biennale) ցուցահանդէսին լուսաւոյն նկարներէն մէկը նկատուեցաւ:

Այն օրէն ի վեր, Լ. Մինասեան կ'ընթանայ բարձունքէ բարձունք, ստեղծա-

գործելով գլուխ-գործոցներ՝ 1957ին, «Ձարգացող ձեւեր»՝ որ կը գտնուի Վենետիկի Արդի Արուեստի միջազգային թանգարանին մէջ, «Ծնունդը»՝ որ սեփականութիւնն է Լոնտոնի Obelisk պատկերասրահին, եւ այլն:

1958ին, արուեստագէտ-քննադատներու ուշադրութեան առարկայ կը դառնայ «Բացարձակ ձեւ» նկարը, որ Kassellի միջազգային ցուցահանդէսին զարդը կադմէլէ ետք, այժմ կը գտնուի Անդլիոյ մայրաքաղաքին Obelisk պատկերասրահին մէջ:

Բազմալիպմանի տաղանդ մըն է Լ. Մինասեան: Ո՛չ միայն իւղաներկի, այլ նաեւ ջրաներկի վարպետ մըն է անիկա: Յարգի են նաեւ անխամատիտով եւ չինական մեյանով գծած իր նկարները:

Իրրեւ պսակում իր քառասնամեայ նրաւաճումներուն, Լ. Մինասեանի համար փառաշուք յաղթանակ մը եղաւ, 1966ի 11-24 Յունիսին, Վենետիկի «Il Traghetto» սրահին մէջ տուած նկարներու ցուցահանդէսը, ուր հաւաքուած էին, 1962էն սուրին իր նկարած գեղեցիկ պատանեւորը: 1948էն ետք, «Ձեւեր» ստեղծելու արքան է անիկա: Ձեւեր՝ կիսաւարտ, հրէշաւոր, գալարուն, օձապտոյտ, միօրինակ, որոնք կը մօտենան գերերապաշտ գաղափարին սահմաններուն. Ձեւեր, որոնք շլացնող եւ լուսաւոյ գոյներու զգեստաւորումով, պայծառ ծիածանի մը թուլանքն ունին: Արեւելքի լուսավառութեան, ճոխերանդ փարթամութեան ցոլքը կայ անոր ամէն մէկ նկարին մէջ:

Լ. Մինասեանի մեծագոյն առաւելութիւններէն մէկն է այն շեշտուած ինքնատուրութիւնը, որ փառապաշտ կը կադմէ իր գործերուն: Անջնջլի կնիք մը կայ իր բոլոր ստեղծագործութիւններուն մէջ, կնիք մը, որ իրն է միայն: Առաջին իսկ նայուածքով, անխարան կարելի է ճանչնալ Մինասեանի վրձինէն ելած որեւէ գործ, որ իր գանուող միջավայրին տիրապետելու յատկանիշն ունի:

Բանդալուշական աշխարհ մըն է իր անստեղծագործութիւններու շրջապատը. աշ-



Լ. Մ. - «Գերերապաշտ ձեւեր», չինամեյան, 1963:

խարհ մը բանաստեղծութեամբ զեղուն եւ խորհրդաւորութեամբ առինքնող:

Իր արուեստին կատարելութեամբ, անտարակոյս, իտալական արդի նկարչութեան ամէնէն փայլուն եւ մնայուն դէմքերէն մէկն է Լեւոն Մինասեան:

* * *

Անուանի նկարիչ ըլլալէ զատ, Լ. Մինասեան է նաեւ փնտռուած եւ զնահատուած գեղագէտ-քննադատ մը:

Բազմաթիւ նկարչներու ցուցահանդէսի գրուած նկարներու ցանկերուն ներածականը եւ քննադատական գրութիւնները իր ստորագրութիւնը կը կրեն:


Լ. Մինասեան՝ նկարչութեան մասին ծանրակշիռ յօդուածներ ունի հետեւեալ թերթերու մէջ, որոնց աշխատակից է. Հոմի մէջ լոյս տեսնող «La fiera Letteraria» եւ «Il Taccuino», Թորինոյի «I 4 soli», «Arti», «Il Gazzettino», «Il Mattino del Popolo», «Cronache veneziane»,

«La Vernice» (Վենետիկ), «Valori», «Sodalizio» (Պոլոնիա), «Gazzetta del Veneto», «Gazzetta veneta», «Il Veneto» (Փատուա), «Vernice» (Թրիեստ), «La Gazzetta di Modena» եւ «Gazzetta dell'Emilia» (Մոտենա), «Il Giornale di Vicenza» (Վիչենցա), «Alto Adige» «Պոլ-ցանոյ», Եւայլն, Եւայլն:


1948ին, զեղարուեստի մասին՝ արժէ-քաւոր ճառ մը պատրաստած եւ կարգա-ցած է «Պատկերաւոր Արուեստի Միջազ-գային Ա. Ժողով»-ի ընթացքին: Այդ ճա-ռը, իր շահեկանութեան համար, առան-ձին հատորով լոյս տեսած է նոյն տար-ուան ընթացքին:

1955ին, Lionello Venturi-ի հրաւերով, հիանալի վիճազութիւն մը պատրաստած է Հռոմի Գեղարուեստասէրներու Ընկե-րութեան համար:

1948ին, Վենետիկի Bevilacqua La Ma-ssa ցուցասրահի զատական կազմին, իսկ 1963ին եւ 1964ին, Վենետիկի Արուեստի Գործերու հսկողութեան խորհուրդին ան-դամ ընտրուած է, բայց յետոյ հրաժա-



Լ. Մ. - «Բարձրացող ձեւը», իւղաներկ
(70×90 հրդմ.), 1965:



Լ. Մ. - «Կարմիր պտուղը», իւղաներկ
(80×80 հրդմ.), 1964:

րած է այդ պատիւէն՝ անձնական պատ-ճառներէ մղուած:

1964ին, Giovanni Cavicchioli հեղինա-կին՝ «Il Vecchio Maestro» զիրքին յառա-ջարանը զրած է:

Հարուստ է նաեւ շարքը իր ճառախո-սութիւններուն, որոնց նիւթը եղած է ընդ-հանրապէս նկարչութիւն եւ նկարիչներ:

Հին եւ նոր արուեստագէտներու մասին ունեցած է անթիւ ասուլիսներ, Tiepo-լէն սկսեալ մինչեւ Cézanne, Georges Rouault, Arp, Bonnard, Ensor, De Pisis, P. Klee, Modigliani, Եւայլն, Եւայլն:

Giovanni Cavicchioli-ի ներածականով, V. Amicucci, Լեւոն Մինասեանի նուիր-ուած հատոր մը հրատարակած է 1958ին, որուն մէջ հայ նկարիչէն քառասուն նը-կարներ տպուած են սեւ-ճերմակի վրայ:

Քառասուն տարուան ընթացքին, Լ. Մինասեանի ստեղծած հազարէ աւելի ար-ժէքաւոր նկարներէն ոմանք կը դառնան Վենետիկի Արդի Գեղարուեստի միջազ-գային թանգարանին, Միլանի, Պրինտի-զիի, Վերոնայի, Փատուայի, Թրիեստի, Փիզայի, Լոնտոնի պատկերասրահներուն մէջ, ինչպէս նաեւ Arp-ի, Peggy Gugen-heim-ի եւ շատ մը անհատական հաւաքա-ծոներուն մէջ:

Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ՈՂՈՂՈՒՄ Ս. ՂԱԶԱՐԻ

4 ՆՈՅԵՄԲԵՐ 1966

Նոյեմբեր 4ի ջրհեղեղը, որ հարուածեց զրեթէ բոլոր Իտալիան, մանաւանդ Ֆի-րենցէ ու Վենետիկ քաղաքները, չինայեց նաեւ Ս. Ղազարին, հակառակ որ անոր պարիսպները մնացին անխորտակելի:

Աննախընթաց մակընթացութիւն մը, որուն նմանը չի յիշատակուիր հազար տարիէ ի վեր, միացած հարաւ-արեւե-լեան կատաղի քամիին (120 հզմղր. ժա-մական արագութեամբ), խուժեց յան-կարճ Վենետիկի խաղաղ լճակին վրայ: Յորդահոս անձրեւը կու տար իսկական ջրհեղեղի մը տխուր պատկերը:

Ծովի ջուրը բարձրացած էր մէկ ու կէս մետրէն աւելի, սովորական աստիճանէն վեր: Վանքի մեծ ու փոքր նաւամատոյց-ներէն եւ շրջապատի այլ յարակից մուտ-քերէն անդամ (չպատահած եղելութիւն) ջուրը խուժեց ներս. մայր դրան առջեւ հասաւ մինչեւ 1,13 մ. բարձրութեան: Հակառակ որ ստորին յարկի սրահները թեթեւ զառիւկեր մը ունին, յորդահոս ջուրը մտնելով հիւրանոցէն, առաջացաւ մինչեւ խոհանոց, ճաշարան, եկեղեցի, շտեմարաններ, աշխատասրահներ ու նեակներ, նորընծայարան, ներքին մա-տուռ:

Ըստ վանքի ժամանակագրութեան, 1916ի Նոյեմբեր 21ին տեղի ունեցած է մեծ մակընթացութիւն մը եւ ջուրը սեղա-նատան մէջ հասած է մինչեւ 0,38 մ. բարձրութեան. այս անգամ սակայն բար-ձրացաւ մինչեւ 0,78 մ.: Իսկ եկեղեցին, ջուրը անցնելով առեանէն, մտաւ դաս ու բարձրացաւ մինչեւ աւագ բեմի երրորդ աստիճանը (0,44 մ. զասին մէջ): Թէ՛ 1916ի, թէ՛ 1935ի եւ թէ՛ 1951ի մակըն-թացութիւններուն, ջուրը չէր մտած դաս:

Վանքի քառանկիւնին ներքին պարտէ-զը, արտաքին պարտէզին մեծ մասը եւ այլքին երկար ժամեր մնացին աղի ջուրե-րու տակ. սովորական պայմաններուն, ջուրը վեց ժամուան ընթացքին կը սկսէր քաշուիլ. այս անգամ յամառօրէն մնաց 12 ժամէն աւելի: Իմացանք, որ Վենետի-կի լճակին պաշտպան՝ դարաւոր հսկայ թուփերն ալ խորտակուեւ եւ ծովի ահեղ ալիքներուն զիմաց, եւ Ազրիականը կա-տաղօրէն խուժեւ է ներս:

Ս. Ղազարի վարի յարկերէն մասնաւո-րաբար վնասուեցան սեղանատան եւ եկե-ղեցւոյ ընկոյզէ որմնատախտակները, ներքնայարկի կահ-կարասիները. իսկ մարմարեայ սիւններուն վրայ իջաւ նաւ-թային թանձր մրուր մը: Ջերմարաչիսի կեղերոնները, իրենց ելեկտրական սարքե-րով ու բոցահան մեքենաներով սուղուե-ցան ջուրերու տակ: Դադրեցաւ ելեկ-տրութիւն ու հեռաձայն:

Մինչ մէկ կողմէն ջուրերը կը բարձրա-նային ահեղ թափով, ներսը պայքարը սկսած էր փրկելու համար կարելին. միա-բաններ ու աշակերտներ կը բարձրացնէին եւ ապա քիչ մըն ալ աւելի կը բարձրա-ցնէին ամէն թանկագին առարկայ, գիրք ու լրագիր:

Հակառակ ամէն նախազուշուրեան, ջուրը մտաւ նաեւ տպարան, որ թէեւ ներքնայարկի վրայ, սակայն հինգ աստի-ճան աւելի բարձր է միւս յարկարաժին-ներէն: Տպագրական բաղձաթիւ մեքենա-ներու ներքնամասերը մնացին աղի ջու-րին տակ:

Երկրասարդ վարդապետներէն յանդրդ-նադոյններ բոկոտն իջան տպարան, զրե-թէ լողալով, փրկելու համար այնտեղէն ալ կարելին. ի մասնաւորի, հայկական